

Ի ՎԱՆ ԹՈՒԻՐԿԵՆԵՎ

ՅԱՂԹԱԿԱՆ ՍԻՐՈՅ ԵՐԳԸ

Թ.

Վալէրիան իսկոյն քնեց, բայց, մարիօն չէր կարողանում քնել։ Դիշերուայ լուսթեան մէջ, ամէն բան որ տեսել էր, ամէն բան որ զգացել էր, ներկայանում էին աւելի կենդանի կերպով։ Նա ինքն իրան տակաւին աւելի յամառէն տալիս էր հարցեր, որոնց ինչպէս առաջ, պատասխան չէր գտնում։ «Մի՞թէ Մուծծիօն իսկապէս մի կախարդ էր դարձել, եւ մի՞թէ նա արդէն թունաւորած չէր Վալէրիային։ Նա հիւանդ էր ... բայց ի՞նչ էր նրա հիւանդութիւնը»։ Երբ պառկեցաւ, զլուխը ձեռքերում, բռնելով իր տենդուտ շունչը ու վշտագին խորհրդածութեանց անձնատուր, լուսինը՝ նորից բարձրացաւ անամպ երկնակամարի վրայ եւ, նրա ձառագայթների հետ միասին, կիսաթափանցիկ պատուհանի ապակիների միջից, սկսաւ, տաղաւարի ուղղութիւնից՝ կամ արդեօք այդ ֆարիօնի երեւակայութիւնն էր — գալ մի փսփսուք, ինչպէս մի թեթեւ անուշահոտ հոսանք. առա մի թախանձագին տարփատենչ ժրմունջ լուսեց ... եւ այդ վայրկեանում ֆարիօն նկատեց, որ Վալէրիան սկսում էր նուազկոտորէն երերուել։ Ցնցուեց, նայեց. Վալէրիան վեր կա-

ցաւ, նախ կամացուկ սահեցուց մէկ ոտքը, ապա միւսը դուրս հանեց անկողնուց, եւ լուսնից հրապուրուած մէկի նման, իր անկենդան աչքերը անշարժ սեւեռած առջեւը, ձեռները տարածելով, սկսեց շարժուել դէպ ի պարտէզը։ Ֆարիօն վայրկենապէս վազեց միւս սենեակի դռնից դուրս, եւ արագապէս գառնալով տան շուրջը, նիզեց դուռը, որ առաջնորդում էր դէպ ի պարտէզը ...։ Հազիւ թէ ձեռքը նիզին էր դրած երբ զգաց թէ մէկը աշխատում էր բաց անել դուռը ներսի կողմից, հրելով նորից եւ նորից ... եւ ապա, այնտեղից լուսեց մի ողորմուկ տարփակէզ հեծեծանք ...

«Բայց Մուծծիօն քաղաքից չի վերադարձել» վայլատակուեց ֆարիօն գլխում, եւ նա խութեց դէպ ի տաղաւարը ...։

Ի՞նչ տեսաւ։

Գալիս էր դէպ ի նա, լուսնի ճառագայթների ներքեւ ակնախտիղ կերպով փայլող արահետից, Մուծծիօն։ Նա շարժում էր մի լուսնոտի նման, ձեռները իր առջեւ կարկառած, աչքերը բաց, այլ առանց տեսնելու ... ֆարիօն վազեց դէպ ի նա, բայց նա ուշադրութիւն չդարձնելով շարժուեց առաջ,

քայլում էր միակերպ, քայլ առ քայլ, եւ նրա խստաբարոյ դէմքը լուսնի լուսով ժպտում էր Մալայեցուն նման։ Ֆարփօն կարող էր կանչել նրան իր անունով . . . բայց այդ վայրկեանում, իր ետեւից, տան միջից, լսեց մի պատուհանի ճռնչոցը . . . :

Նայեց իր շուրջը . . .

Այո՛, ննջասենեակի պատուհանը բացուել էր վերից մինչեւ վարը, եւ վալէրիան, մէկ ոտքը դնելով յեցուկի վըրայ, կանգնեց պատուհանի մէջ . . . նրա ձեռները կարծես որոնում էին Մուծծիօին . . . թւում էր թէ նա աւելի քան ճիգեր էր թափում դնալ դէպ ի նա . . . :

Անասելի մի զայրոյթ լցրեց ֆարփօի կուրծքը մի յանկարծահաս ներխուժումով։ «Եզովեա՛լ կախարդ, աղաղակեց կատաղութեամբ, եւ բռնելով մէկ ձեռքով Մուծծիօի կոկորդից, միւս ձեռքով չօշափեց իր զօտիում դաշոյնը, եւ միսեց չեղըը նրա կողքին մէջ, մինչեւ դաստակալը։

Մուծծիօն արձակեց մի բարձրաձայն ճիչ, եւ դնելով ձեռքը վէրքին վըրայ, դողդողալով վազեց դէպ ի տաղաւարը։ Բայց միեւնոյն վայրկեանում, երբ ֆարփօն դաշնահարեց նրան, Վալէրիան բարձրաձայն ճչաց, եւ ընկաւ գետինը մանգաղից կարուած խոտի նման։

Ֆարփօն վազեց դէպ ի նա, բարձրացնելով նրան, տարաւ անկողինը ու սկսեց խօսել նրան . . .

Նա անշարժ պառկած մնաց մի երկար ժամանակ, բայց վերջապէս բաց արեց աչքերը, մի խոր, բեկուած, երանաւէտ հառաչանք արձակեց, նման մէկին, որ մաղապուրծ աղատուած է անմիջական մահից, տեսաւ իր ամուսնուն, եւ փաթաթելով բազուկները նրա վզով՝ սողաց դէպ ի նրա մօտ, «Դո՛ւն, դո՛ւն ես» թոթովեց։ Աստիճանաբար

ձեռները թուլացան, նրա գլուխը թերուեց դէպ ի եա, եւ մի երանաւէտ ժըպիտով մրմնջաց – «Փա՛ռք Աստուծոյ, բոլորը վերջացաւ . . . Բայց որքա՛ն յոդնած եմ զգում ինձ»։ Եւ ընկաւ մի խոր բայց ոչ ծանր քունի մէջ։

Ժ.

Ֆարփօն նստեց նրա անկողնին մօտ եւ բնաւ աչքերը չվերցնելով նրա գունատ, ընկճուած, բայց արդէն խաղաղած դէմքից, սկսեց անդրագառնալայն բանի վրայ, ինչ որ պատահել էր . . . եւ նոյնպէս, թէ ի՞նչպէս այժմ պէտք է շարժուէր, ի՞նչ քայլ պէտք է առնէր։ Եթէ ինք սպանել էր Մուծծիօին – եւ յիշելով թէ որքան խորը մտել էր դաշոյնը նրա կողքին, այդ մասին կասկած չունէր, չէր կարելի այդ թագցնել։ Նա պէտք էր այդ մասին տեղեկացնէր արքիդուքսին, դատաւորներին . . . բայց ինչպէ՞ս բացատրել, ի՞նչպէս նկարագրել մի այլպիսի անըմբոնելի արարք։ Նա, ֆարփօն, իր սեփական տան մէջ սպանել է իր մերձաւոր աղգականին, իր ամենասիրելի բարեկամին։ Նրանք պիտի հարցնեն՝ «Ի՞նչուհամար, ի՞նչ հիման վրայ . . .»։ Բայց եթէ Մուծծիօն մեռած չէ։ Ֆարփօն չի կարող հանդուրժել մնալ անորոշութեան մէջ։ Եւ ապահովելով ինքն իրան, թէ Վալէրիան քնած է, նա զգուշութեամբ վեր կացաւ իր աթոռից, եւ տանից դուրս գալով քայլերը ուղղեց դէպ ի տաղաւարը։ Ամեն բան լուս էր այնակ, միայն մէկ պատուհանում մի լոյս էր երեւում։

Ճնշուած սրաով բաց արեց դուռը (այնտեղ կային տակաւին արիւնթաթախ մատների հետքեր, եւ արիւնի սեղաթիլներ կային աւագու ճանապարհի

վրայ) եւ անցաւ առաջին մութ սենեակի միջից . . . ու կանգնեց անշարժ վրան չէմքում, ընկճուած՝ ասլութիւնից: Սենեակի մէջտեղում, մի պարսկական դորգի վրայ, մի ոսկեհուռ ծաղկենկար բարձ իր գլխի ներքոյ, Մուծծիօն, անգամները ուղիղ դուրս երկնցուցած, պառկել էր, ծածկուած մի լայնատարած եւ սեւանկար կարմիր շալով: Նրա դէմքը, մոմի նման դեղնագոյն, փակուած աչքերով եւ կապուտացած կողերով, զարձած էր դէպ ի առաստաղը, ոչ մի շունչ չէր զգացւում նրա մէջ. թըւում էր մի դիակ: Նրա ոտքերի կողմը՝ ծնրադիր նստել էր Մալայեցին, որ նոյնպէս ծածկուել էր մի կարմիր շալով: Նա իր ճախ ձեռքում բռնել էր մի ինչ որ անծանօթ տունկի ճիւղ, վայրի ձարխոտի նման, եւ թեթեւ ծոռւելով դէպ ի առաջ, ակնապիշ, անքթիթ նայում էր իր տիրոջը: Մի փոքրիկ ջահամքացուել էր տախտակամածի վրայ, որ վառւում էր մի դեղնագոյն բոցով, եւ միակ լոյսն էր սենեակում: Բոցը չէր պլղում ոչ էլ մխում: Մալայեցին չշփոթուեց ֆարիօի ներս մտնելուցը: Նա պարզապէս աչքերը նրան դարձրեց, եւ նորից հակեց նրանց Մուծծիօի վրայ: Ժամանակ առ ժամանակ նա բարձրացնում եւ ցածացնում էր ճիւղը, ու ճօճում նրան օդում, եւ իր համր շրթները կամաց կամաց անջատում եւ շարժում էին, որպէս թէ արտասանէին անձայն խոռքեր: Տախտակամածի վրայ, Մալայեցու եւ Մուծծիօի միջեւ, փըռուել էր դաշոյնը, որով ֆարիօն հարուածել էր իր բարեկամին: Մալայեցին ճիւղով մէկ հարուած զարկեց արիւնլուայ դաշոյնին: Մի բոպէ անցաւ . . . մի ուրիշ եւս: Ֆարիօն մօտեցաւ Մալայեցուն, եւ ծուելով դէպ ի նա, հարցրեց նրան ցած ճայնով, «Մեռա՞ծ է»: Մա-

լայեցին խոնարհեց դլուխը վերից վար, եւ արձակելով աջ ձեռքը շալից, տիրաբար մատնանշեց դուրս: Ֆարիօն ուղում էր կրկնել իր հարցումը, բայց հըրամայող ձեռքի կեցուածքը կրկնուել էր, եւ ֆարիօն դնաց դուրս սրտմտած, զարմացած, բայց հնազանդ:

Նա գտաւ Վալէրիային քնած, ինչպէս առաջ, եւ նոյն խոկ մի աւելի հանգարած դէմքի արտայալութիւնով: Նա չհանուեց. բայց նստեց պատուհանի մօտ, դլուխը ձեռքերումը, եւ միանգամ եւս խորասուզուեց խորհուրդների մէջ: Ծագող արեւը գտաւ նրան տակաւին միեւնոյն տեղում: Վալէրիան չէր զարթնել:

ԺԱ.

Ֆարիօն մտադրուեց սպասել մինչեւ նրա զարթնելը եւ ապա պատրաստըւել ճանապարհուելու դէպ ի ֆէրրարա, երբ մէկը թեթեւ կերպով զարկեց դուռ: Ֆարիօն դուրս ելաւ եւ տեսաւ իր ծերունի մատակարար Անտօնիօին: «Անեօր» — սկսեց ծերունին — Մալայեցին ճիշդ հիմա տեղեկացրեց ինձ, որ սինեօր Մուծծիօն ծանրապէս հիւանդացել է, եւ ցանկանում է, որ իր գոյքերը փոխադրուին քաղաք, եւ միաժամանակ նա խնդրում է ձեզանից թոյլ տալ նրան ունենալ ծառաներ որպէս զիօգնեն տեղաւորելու իրեղէնները. խընդրում է նաև որ ճաշի ժամանակ հաճիք ուղարկել կապոցակիր ճիեր եւ թամբուած ճիեր, եւ մի քանի ուղեկիցներ՝ ճանապարհորդութեան համար: Թոյլ տալու էք»:

«Մալայեցին տեղեկացրեց ձեզ այդ», հարցրեց ֆարիօն. «ի՞նչ կերպով. նա համր է»: «Ահաւասիկ, սինեօր, այն թուղթը, որի վրայ նա դրեց, բոլորը մէր լեզուով, եւ շատ ճշու-

թեամբ:» «Եւ Մուծծիօն ասում ես հիւ-
տա՞նդ է»: «Այս, նա խիստ ծանր հիւանդ
է, եւ ոչ ոք չի կարող տեսնել»: «Նրանք
բժիշկի դիմե՞լ են»: «Ոչ, Մալայեցին
թոյլ չի տուել»: «Եւ այս Մալայեցի՞ն
գրեց»: «Այո՛, նա ինքը գրեց»: Ֆարիօն
մի քանի բողէ չխօսեց: «Ապա, այդ
դէպքում, կարգադրի՛ր բոլորը, ասաց
նա վերջապէս: Անտօնիօն հեռացաւ:

Ֆարիօն շփոթուած մի ակնարկ նե-
տեց իր ծառայի ետեւից: «Ուրեմն, նա
չէ մեռա՞ծ», մտածեց Եւ չէր իմա-
նում հրձուէ՞ր, թէ տրտմէր: «Հիւ-
տա՞նդ» Եւ բայց մի քանի բողէ առաջ
նա մի դիակ էր, որին իր աչքովը տե-
սել էր: Ֆարիօն վերադրածաւ Վալէ-
րիային: Նա զարթնելով բարձրացրեց
դլուխը. ամուսինն ու կինը փոխանակե-
ցին մի երկար նայուածք, նշանակու-
թիւնով լեցուն:

«Նա գնացե՞լ է», ասաց Վալէրիան
յանկարծակի:

Ֆարիօն գողգոզաց. «Ի՞նչպէս թէ
գնացել է, «ի՞նչ ուզում ես ասել» . . . :

«Նա մեկնե՞լ է այստեղից . . .» շա-
րունակեց Վալէրիան:

Մի բեռ ընկաւ ֆարիօն սրտից: «Ո՛չ, տակաւին այսօր գնալու է»:

«Եւ ես նորից երրեք, երրեք պիտի
չտեսնե՞մ նրան»:

«Ո՛չ, երրե՞ք:»:

«Եւ այս երազները նորից չե՞ն վե-
րադառնալու»:

«Ո՛չ»: Վալէրիան նորից արձակեց
հանգստացման մի խոր հառաջանք, Եւ,
մի երանաւէտ ժպիտ մի անգամ եւս ե-
րեւցաւ նրա շրթների վրայ:

Նա բռնեց իր ամուսնու երկու ձեռ-
ները.

«Եւ մենք երրեք խօսելու չենք նրա
մտախին, երրե՞ք. լսո՞ւմ ես, սիրելի՛ս,
. . . եւ ես թողնելու չեմ իմ սենեակը

մինչեւ որ նա գնացած լինի: Եւ հիմա,
ուղարկիր ինձ իմ նաժիշտները . . . բայց
սպասիր, — մէկ կողմ տար այդ բանը —
նա մատնացոյց արաւ Մուծծիօնի կողմից
տրուած մարգարտեայ մանեակը, որ
կեցած էր անկողնին կից, մի փոքրիկ
սեղանի վրայ — եւ նետիր նրան իսկոյն
մեր ամենախոր ջրհորին մէջ: Գրկիր
ինձ, ես քո Վալէրիան եմ, եւ է՛լ մի
գար ներս, ինձ մօտ, մինչեւ . . . նրա
գնալը»:

Ֆարիօն առաւ մանեակը, — նրա
մարգարիտները, որ այնքան սիրել էր,
այժմ մղտացած էին երեւում — Եւ ա-
րաւ ինչպէս իր կինը տնօրինեց: Ապա,
նա վար իջաւ, պարտէզի շուրջը թափա-
ռելու. նայեց հեռուից դէպ ի տաղաւու-
րը, որի շուրջը մեկնումի շարժման
պատրաստութիւններ էին սկսուել: Բո-
պասաւորները գուրս էին բերում ար-
կղներ, բեռնաւորում էին ձիերը. բայց
Մալայեցին նրանց մէջ չէր: Մի անդի-
մազրելի մղում ֆարիօն ստիպեց մի
անգամ եւս նայելու ինչ որ կատարում
էր տաղաւարում: Նա վերյիշեց, որ
տեսում գաղտնի մի գուռ կար, որից
կարող էր հասնիլ ներսի սենեակը, որ-
տեղ Մուծծիօն առաւօտուն պառկել էր:
Նա գաղտնի կերպով պարտեց զրան
շուրջը, եւ գտաւ նրան չկղպուած, եւ,
անջատելով մի ծանր վարագոյրի փակ-
ուած ծալքերը, նրանց միջից մի վարա-
նուս ակնարկ պարտցուց սենեակի վր-
ուած:

ԺԲ.

Մուծծիօն այժմ պառկած չէր գոր-
դին վրայ: Հազնուած, իբր թէ ճամ-
բորգելու էր, նա նոտել էր մի բազկա-
թոսի վրայ, բայց մի դիակի էր նմա-
նում, ձիշդ ինչպէս ֆարիօն առաջին
այցելութեան ժամանակ: Նրա ընդար-

մացած դլուխը ընկել էր աթոռի ետեւը, եւ նրա դէպ առաջ երկարած ձեռները դեղին, անկենդան, կարծրացած, կախուել էին իր ծունկերի վրայ: Նրա կուրծքը չէր ելեւէ ջում: Աթոռին մօտ, սախտակամածին վրայ, որտեղ չորացած խոտածաղիկների տերեւները փըռուել էին, կանգնած էին մի քանի տափակ թասեր մի սեւ հեղուկով լցուած, որը արտաշնչում էր մի զօրաւոր հոտ գրեթէ հեղձուցիչ, մշկախւղի հոտ: Իւրաքանչիւր թասի շուրջը պլուել էր պղնձագոյն մի փոքրիկ օձ, ոսկի աչքերով, որ ժամանակ առ ժամանակ շողշողում էին, այն ինչ ուղղակի Մուծծիօի դիմացը, երկու քայլ նրանից հեռու, երեւում էր Մալայեցու երկար կերպարանքը, փաթաթուած՝ մի վերարկուի մէջ բազմագոյն ծաղիկներով դիպակից, որը կապուած էր էր մէջքի շուրջը մի վագրի պոչով. մի սրածայր խոյրի ձեւ ունեցող գլխարկ դրած էր դլիսին: Բայց նա անշարժ չէր: Մի վայրկեան նա ակնածանքով խոնարհում էր վար, եւ թւում էր թէ աղօթում էր, իսկ միւս վարկեանում, ինքն իրան վեր քաշում էր իր բովանդակ բարձրութիւնով, նոյն իսկ կանգներով ոտի մատների ծայրերի վրայ: Եւ ապա, մի ներդաշնակ շարժուածքով, լայն տարածում էր բազուկները, ու յարաւեւութեամբ շարժում էր դէպ ի Մուծծիօն: Թւում էր, որ սպառնում եւ կամ հրամայում էր նրան, յօնքերը պոստելով, ոտքը դետինը զաբնելով: Այս բոլոր գործողութիւնների համար, երեւում էր որ նա մեծ միգ էր թափում, նոյն իսկ ի վնաս իր անձին: Նա չնշում էր ծանր կերպով եւ քրտինքը հոսում էր իր ճակատից:

Յանկարծ նստեց գետնին վրայ, եւ քաշելով մի լեցուն շունչ, յօնքերը կընճուտած՝ անհուն ջանքով իր ամուր

սեղմած ձեռները երկարում էր դէպ ի նա, որպէս թէ նրանցում մի սանձ ըըռնած լինէր: Եւ ֆարիօն մի աննկարագըրելի սարսափով տեսաւ, որ Մուծծիօի գլուխը կամաց լամաց բարձրանալով աթոռի ետեւից շարժուեց դէպ ի առաջ՝ հետեւելով Մալայեցու ձեռներին: Մալայեցին թոյլ տուեց, որ նա ընկնէր վար եւ Մուծծիօի գլուխը նորից ծանրապէս ընկաւ դէպ ի յետ: Մալայեցին կրկնեց իր շարժումները, եւ գըլուխը հլու կերպով նրան հետեւելով կրկնեց նոյն շարժումները: Թասերում գտնուած սեւ հեղուկը սկսեց արձագանդել մի նուազ զանգականման հնչիւն, եւ եւ պղնձագոյն օձերը ազատօրէն պլուում էին նրանցից իւրաքանչիւրի շուրջը: Ապա, Մալայեցին դէպ առաջ մի քայլ առու, եւ բարձրացնելով արտեւանունքը անհունապէս լայն բաց արեց աչքերը եւ խոնարհեցրեց գլուխը դէպ ի Մուծծիօն: Եւ մեռած մարդու կոպերը գողգղացին, տարտամ կերպով բաժանուեցին, եւ նրանց տակից կարելի էր տեսնել աչքի գունդերը, աղօտ՝ որպէս կապար: Մալայեցու դէմքը պայծառ էր յաղթական հպարտութիւնով եւ հրճուանքով, մի հրճուանք՝ որ գրեթէ չարաբարոյ էր. նա լայն կերպով բաց արեց բերանը եւ կրծքի խորքից մի երկարածիկ ոռնոց արձակեց . . . : Մուծծիօի շրթներն էլ անջատուեցին, եւ մի նուազ հեծիւն դողում էր նրանց վրայ, ի պատասխան այդ անմարդկային ձայնին . . . : Բայց այս միջոցին ֆարիօն այլեւս չէր կարողանում տոկալ, նա երեւակայում էր, որ ինք ներկայ էր մի ինչ որ դիւային թովչութեան: Նա եւս մի ճիչ արձակեց եւ խուժելով դուրս, վազեց դէպ ի տուն այնքան արագ որքան որ կարող էր, վազելու ատեն երեսը խաչակնքելով եւ աղօթքներ կրկնելով:

ԺԳ.

Երեք ժամից յետոյ, Անտոնիօն եկաւ նրա մօտ, եւ յայտնեց նրան, թէ ամէն բան պատրաստ է, եւ թէ բոլոր իրերը ծրարուած լինելով՝ սինեօր Մուծծիօն պատրաստում է մեկնելու: Առանց մի բառով պատասխանելու իր ծառային, Ֆարիօն գնաց դուքս պատշտամբի վրայ, ուրաեղից կարելի էր տեսնել ամարանոցը: Մի քանի կապոցակիր ձիեր խմբուեցին նրա շուրջը, մի հուժկու մարտածի, որ թամբուել էր երկու հեծնողների համար, առաջնորդում էր դէպի ի սանդուխի աստիճանները, ուր զլիսարաց կանգնել էին սպասաւորները՝ զինուած առաջնորդների հետ: Ամարանոցի դուռը բացուեց, եւ օգնութեամբ Մալայեցու, — որը մի անգամ եւս հագել էր իր սովորական տարազը, — Մուծծիօն երեւեց: Նրա դէմքը մեռելի նման էր, եւ ձեռները կախուել էին մեռած մարդու ձեռների նման, բայց նա քայլում էր ... այո՛, դրականապէս քայլում էր, եւ ուղղարերձ նստելով ձիու վրայ, նա շօշափելով գտաւ սանձը: Մալայեցին դնելով ոտները ասպանդակին՝ ոստնեց վեր, նրա ետեւը, թամբին վրայ եւ բազուկներով զրկեց նրան, որից յետոյ ամրող խումբը ճամբայ ելաւ:

Զիերը շարժուեցին, եւ երը մի շըրջան արին տան առջեւը, Ֆարիօն կարծեց որ Մուծծիօի թուխ դէմքում փայլում էին երկու բիծեր ... կարո՞ղ էր լինել, որ նա աչքերը դարձրած լինէր իր վրայ: Մալայեցին միայն խոնարհուեց դէպի ի նա: ... Հեղնականօրէն, ինչպէս միշտ:

Վալէրիան այս բոլորը տեսա՞ւ արդիօք: Նրա պատուհանի փեղկերը փակուած էին ... բայց կարող էր լինել, որ նա կանգնած լինէր նրանց ետեւում:

ԺԴ.

Ճաշի ժամանակ Վալէրիան եկաւ ճաշասենեակը, եւ չափազանց հանդարտ եւ սիրալիք էր, սակայն եւ այնպէս նա գեռեւս գանգատուում էր յոզնածութիւնից: Բայց այժմ նրանում գրեթէ յուզում չկար, նրա նախկին շարունակական շփոթութիւնն ու գաղտնի սարսափը չկար: Եւ երբ Մուծծիօի մեկնելուց մէկ օր յետոյ, Ֆարիօն նստեց նորից աշխատելու նրա նկարի վրայ, գտաւ նրա դէմքում մաքուր եւ անմեղ արտայայտութիւնը, որի վայրկենական խաւարումը այնքա՞ն վրդովել էր իրան ... եւ նրա վրձինը հաւատարմօրէն շարժուում էր թեթեւ կտաւին վրայ:

Այր ու կին վերսկսեցին իրանց հին կեանքը:

Մուծծիօն անհետացաւ, որպէս թէ երբեք զոյտութիւն ունեցած լինէր: Ֆարիօն եւ Վալէրիան համաձայնուել էին, որպէս երեւում էր, չարտասանել ոչ մի վանկ նրա մասին, ոչ մի բան չիմանալ նրա հետագայ օրերից: Նրա ճակատագիրը, սակայն, մնաց խորհրդաւոր բոլորի համար:

Մուծծիօն իսկապէս անհետացաւ որպէս թէ նա խորասուզուած լինէր հողին տակ: Ֆարիօն, մէկ օր մտածեց, որ իր պարտականութիւնն էր ճշգապէս տաելու Վալէրիային թէ ի՞նչ պատահեց այն չարագուշակ զիշերը ... բայց Վալէրիան հաւանօրէն գուշակեց նրա նպատակը, եւ բռնեց շունչը, կէս փակելով աչքերը, որպէս թէ սպասելիս լինէր մի հարուածի ... :

Եւ Ֆարիօն նրան հասկացաւ, այդ հարուածը չհասցըց նրան: Մէկ գեղեցիկ աշնանային օր, Ֆարիօն իր Զեչիլիայի նկարի վերջին հպումներն էր կտարում, Վալէրիան նստել էր դաշնամուրի մօտ, նրա մատները ըստ բաղդի

գեղարեցան ստեղնաշարի վրայ ... Յան-
կարծ, առանց իր գիտակցութեան ձեռ-
ների տակից զուրս եկաւ տառաջին ձայ-
նանիշը յաղթական սիրոյ երդին, որը
Մուծծիօն մի անգամ նուագել էր, եւ
հէնց այդ վայրկեանում, առաջին ան-
գամ իր ամուսնութիւնից ի վեր, նա ջանում էր:
ինքն իրան մէջ զգաց արոփումը մի նոր
բարախող կեանքի ... :

Վալէրիան ցնցուեց, դադարեց ...
Այդ լունչ էր նշանակում ... Կարո՞ղ էր
լինել որ ...
Այս բառերի վրայ ձեռագիրը վեր-
դամ իր ամուսնութիւնից ի վեր, նա ջանում էր:
Բարախող կեանքի ... :

Թարգ. Պ. Շիքչիբաևն

Ց Ա Յ Գ Ա Խ Ո Ւ Ւ Ի Ւ Խ

Ես դեռ կ'ըղձամ ըմբոշխնել կեամի քախի՛ծն ուղխօրէն,
Քան թէ քովչա՛նքը ասողին եւ վայելքներն երկընքին.
Խենքի մը պէս զարհուրիլ մահուան խրո՛խտ նայուածքէն
Եւ միայնակ ու նըկուն՝ դիմել վշտի մ'համբոյրին:

Դժբախտ պարմա՛ն մ'անտեսուած, որ կը բալէ գլխիկոր,
Որ չէ կրցած դեռ երբեք բաժնել հըրնուանին արցունիքէն,
Դեռ կը բալե՛մ ... մըտածկոտ խեղն մօր մը պէս սըգաւոր,
Մինչ տերեւնե՛րը դեղնած կ'իյնան վըրաս տխրօրէն:

Կ'իյնա՛ն, արդեօֆ ծառե՞րն ալ ունին ցաւեր բիւրաւոր,
Զի կը յանձնեն հովերուն իրենց նիւղե՛րը խոնարի.
Ե՛նչ, այս տերե՞ւն ալ այրդեօֆ վշտի պատառ մ'է բուոր,
Որ հառաչով մը կ'իյնայ նակտիս վըրայ դալկահար:

Կ'իյնա՛ն ... : Այսպէս ամէն ինչ տիեզերքին մէջ ունայն
Վայրկեան մ'անգամ չի կրնար իր բարձրութեան մէջ հըր-
նուիլ.

Կարծես Անհունն ասողերէն պէտք էր իջնէր անպայման,
Եւ իր կարգին՝ Մարդուն պէս, աստուածօրէն տառապիլ:

Կ'իյնա՛ն ... : Մինչ ես, ա'լ յոգնած իմ տատամսոտ զը-
նացքէն,

Կ'երբամ նըստիլ տխրութեամբ ժայռին վըրայ մօտակայ.
Մըտածումներ կը ծընին հիւծած հոգւոյս խորունկէն,
Մինչդեռ հեռուն, վերջալոյսն արձանացա՛ծ կը մընայ: